ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» նոյեմբերի 2026թ. **№ ———Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22 ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 19-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Զապել Եսայանի անվամբ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22 ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Ի նշանավորում աշխարհի ամենախիզախ և զարգացած հայ կանանցից մեկի՝ Զապել Եսայանի հանրային և գրական արդյունավետ գործունեության՝ առաջարկվում է Կենտրոն վարչական շրջանի Կիլիկիա թաղամասում տեղակայված Երևան քաղաքի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարանը անվանակոչել ուսյալ հայուհու անունով: Գրադարանի շտեմարանում առկա են Զապել Եսայանի հեղինակած գրքերը, նրա կյանքին և գործունեությանը վերաբերող տպագիր ստեղծագործություններ, ի թիվս որոնց կան նաև կին հեղինակների ստեղծագործությունների մեծ գրացանկ՝ շուրջ 10,000 կտոր գիրք, որոնք ունեն մեծ պահանջարկ ընթերցողների շրջանակներում:

Գրադարանի անվանակոչումը կարևորվում է այն հատկանշական փաստով, որ 1909թ. Կիլիկիայի խոշորագույն քաղաքում՝ Ադանայում, կազմակերպված հայերի կոտորածից հետո Զապել Եսայանը մեկնել է աղետի վայրեր, երեք ամիս անցկացրել Կիլիկիայի ավերակներում, փաստագրել կատարված վայրագությունները, ականատես եղել հուսահատությանը, որբացած երեխաների և այրիների վիճակին: Նշված ժամանակահատվածում նա շրջել, լսել է կոտորածների ականատեսներին, և արձանագրել այդ ամենը իր հարուստ գրական աշխատություններում («Ավերակներուն մեջ» «Հոգիս աքսորեալ», «Անձկութեան ժամեր»), որոնք ոչ միայն հաշվետվություն են, այլև գրական բացառիկ վավերագրեր, որտեղ հեղինակը նկարագրում էր մարդկային ողբերգությունը, հայ ժողովրդի հոգեբանական ծանր վիճակը: Զապել Եսայանը մեծ հոգածությամբ շարունակել է ոչ միայն իր հասարակական գործունեությունը, այլև զբաղվել է գաղթականներին և որբերին աջակցություն ցուցաբերելով՝ այդ թվում կազմակերպել է հանգանակություններ և հանդես եկել կոչերով: Նրա շնորհիվ փրկվել ու ապաստան են գտել բազմաթիվ հայ որբեր: Մեծանուն հայ կնոջ նվիրական գործունեությունը շարունակվել է մինչև կյանքի վերջ: Զապել Եսայանի աշխատանքային գործունեությունը հայրենիքում կապված է մայրաքաղաք Երևանի հետ, որտեղ 1933 թվականից բնակվել և աշխատել է ժամանակի երևելի և ազդեցիկ կինը՝ իր նպաստն ու նոր գաղափարները բերելով հայկական գրական և հանրային ոլորտներում և դրա մասին առկա է վկայություն Աբովյան 32 հասցեում գտնվող հուշաքարի վրա: Գրադարանի անվանակոչումը ևս մեկ կարևոր փաստագրում կլինի՝ ի հարգանք մեծանուն կին գործչի: Զապել Եսայանը բացառիկ տեղ է զբաղեցնում հայ գրականության պատմության մեջ՝ որպես գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ: Նրա ստեղծագործական ժառանգությունը առանձնանում է

խոր հոգեբանական վերլուծությամբ և մարդասիրական գաղափարների հստակ ընդգծմամբ: Իր գործերում նա բարձրացրել է մարդու արժանապատվության, սոցիալական արդարության, ազգային ինքնության և հատկապես կանանց իրավունքների պաշտպանության հիմնարար հարցերը՝ դառնալով հայ իրականության մեջ ֆեմինիստական մտքի առաջամարտիկներից մեկը:

Հատուկ ուշադրության է արժանի նրա գործունեությունը հայ–ֆրանսիական մշակութային հարաբերությունների զարգացման համատեքստում: Կրթություն ստանալով Փարիզի Սորբոնի համալսարանում՝ նա դարձել է այն հայ մտավորականներից մեկը, ով կամուրջ է հանդիսացել հայկական և ֆրանսիական մշակույթների միջև: Նրա ստեղծագործությունները տպագրվել և տարածվել են նաև ֆրանսիական միջավայրում, իսկ նրա գաղափարները ձևավորվել են եվրոպական առաջադեմ մտքի ազդեցության ներքո՝ միաժամանակ պահպանելով հայկական ազգային ինքնությունը: Այս հանգամանքը նրան դարձնում է հայ-ֆրանսիական մշակութային երկխոսության խորհրդանշական կերպար:

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար է Կենտրոն վարչական շրջանի ենթակայությամբ ք. Երևան, Իսակովի պողոտա, 4 շենք հասցեում գործող Երևան քաղաքի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» ՀՈԱԿ-ը անվանակոչել հայ գրականության, հասարակական մտքի և համաշխարհային հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Զապել Եսայանի անունով՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» ՀՈԱԿ: «Զապել Եսայանի անվան գրադարան» ՀՈԱԿ անվանումով գրադարանի անվանակոչումը կունենա ոչ միայն մշակութային և կրթական, այլև գաղափարական մեծ նշանակություն: Այն կնպաստի երիտասարդ սերնդի շրջանում ընթերցանության խթանմանը, ազգային գրական արժեքների արժևորմանը, ինչպես նաև կներկայացնի հայ կնոջ մտավոր և հասարակական դերի կարևոր օրինակ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմված է «.....»..... 2026թ.
Բաղկացած է ընդամենը 2 էջից

ՀԱՍՏԱՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«.....»..... 2026թ. N..... ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 19.02.2004թ.
գրանցման համար 290.210.03008
ՀՎՀՀ՝ 01821596
24.10.2011 թվականին գրանցված կանոնադրության
թիվ ..... փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձնանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
«.....»..... 2026թ.

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22 ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

2026թ.

«ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Հայաստանի Հանրապետության Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N22 գրադարան» բառերը փոխարինել «Զապել Եսայանի անվան գրադարան» բառերով:

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ «Библиотека имени Забел Есаян» общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ «Библиотека имени Забел Есаян» ОНКО,

անգլերեն լրիվ՝ «Library named after Zabel Esayan» Community Non-Commercial Organization,

անգլերեն կրճատ «Library named after Zabel Esayan» CNCO:

3. Սույն փոփոխությունը հանդիսանում է 24.10.2011թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: